Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 210 - Ա
որոշման

«ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Մանկական խաղահրապարակների տեղադրում Հայաստանի Հանրապետության համայնքների մանկապարտեզների սաների սոցիալական պայմանները բարելավելու նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն՝ 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆորնիա 91355, Լոս Անջելես
4.	Ծրագրի կատարողը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, (քաղ. Երևան, Վիկտոր Համբարձումյան 2 շենք, 37 բնակարան, ՀՎՀՀ՝ 00130776)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայր, Տավուշի մարզի Իջևան համայնքի Դիտավան և Գանձաքար բնակավայրեր, Արարատ մարզի Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ բնակավայր, Կոտայքի մարզի Հրազդան համայնք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	8,460,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի, Տավուշի մարզի Իջևան համայնքի Դիտավան և Գանձաքար բնակավայրերի, Արարատ մարզի Արտաշատ համայնքի

		Վերին Արտաշատ բնակավայրի մանկապարտեզներ, Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 8 մանկապարտեզ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 11-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 25-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Խաղասարքերի պատրաստում և տեղադրում՝ 8,460,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 11-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Խաղահրապարակների սարքավորումների պատրաստման, մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 8,460,000 դրամի չափով
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Տեղական ինքնակառավարման մարմինների հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ